

**ԱՄԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ Ա. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

**ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍ ՈՒ ԱՐԺԱՆԻ ԸԼԼԱՆՔ  
Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ**

***ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆԸ***

Հինգշաբթի, 13 Ապրիլը Աւագ Հինգշաբթի էր եւ յատկանշուեցաւ Ա. Հաղորդութեան խորհուրդի հաստատումով, ոտնլուայի կատարումով, ձերբակալութեան, չարչարանքի եւ խաչելութեան իրերայաջորդ դէպքերու յիշատակումով, սիրոյ, խոնարհութեան, նուիրումի, զոհողութեան եւ խաւարման գիշերուան արարողութիւններով:

Հինգշաբթի, կ.ա. ժամը 11-ին, Էնսիւնյի Ա. Նահատակաց եկեղեցւոյ մէջ Ա. Պատարագի արարողութեան հանդիսապետեց թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ա. Պատարագը մատուցեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան: Առաջնորդ Սրբազանը տուաւ օրուան խորհրուղը վեր առնող պատգամ մը եւ, Բարսեղ Կեսարացի հայրապետի պատգամին հետեւողութեամբ, ներկայ հաւատացեալները յորդորեց հոգիով պատրաստ ըլլալու Ա. Հաղորդութեան ու արժանի ըլլալու անոր: Տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ ներկայ հաւատացեալները ստացան Ա. Հաղորդութիւն:

Նշենք նաեւ, որ Ապրիլ 12-ը, Աւագ Չորեքշաբթին, յիշատակի օրն է մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մատնութեան եւ Մարիամ Մագթաղենացիի ձեռքով թանկագին իւղով օծման:

Մատնութեան եւ իւղի օծումով թաղման խորհրդանիշը սկիզբն էր երկնաւոր վարդապետին երկրաւոր կեանքին վերջին արարին: Օրուան խորհուրդը կոչ կ'ուղղէ մեզի հեռու մնալ դաւադրութիւններէ, մաքրել մեր եութիւնը եւ մեր կեանքը անոյշ բուրմունքով զարդարել:

Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց Կլէմտէյի Ա. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան:

**Holy Thursday Mass**

**WE SHOULD BE READY FOR AND WORTHY OF  
HOLY COMMUNION**

***DECLARED THE PRELATE***

On Thursday, April 13, Holy Thursday, a day that begins with Holy Mass and Communion, and on which we remember Jesus's Washing of the Feet of His disciples, His arrest, torture, and crucifixion.

On this holy occasion, at 11:00 a.m., H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Holy Mass at Encino's Holy Martyrs Church. Holy Mass was conducted by the church's pastor, Rev. Fr. Razmig

Khatchadourian. During his sermon, the Prelate declared that the faithful should be spiritually ready and worthy of Holy Communion. Following confession, those present received Holy Communion.

On Holy Wednesday, we remember Christ's betrayal and the anointing of His body by Mary Magdalene. These two events symbolized the beginning of our Heavenly Savior's last days of worldly life. On this day, the Prelate presided over services at St. Mary's Church in Glendale.